

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

Մասնակցությամբ՝ համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի ավագանու և 53 համայնքի բնակիչներից

2019թվականի հունվարի 30-ին ժամը 12:00-ին

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքի՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանցից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով «Տեղական ինքնակառավարման մասին» «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքով «համայնքի ղեկավարի աշխատակազմի» ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ անհրաժեշտություն են եղել լուծելու 2018թ. ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար աջակցել են Արմավիրի մարզպետը, մարզպետարանի աշխատակազմը, համայնքի ավագանին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքապետն աջակցել է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարմանը, ինչպես նաև կազմակերպում է աշնանացան հացահատիկի բերքահավաքը:

Համայնքն ունի իր առանձնահատկությունները:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ և անասնաբուծությամբ: Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքներին և պարբերաբար կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:

Կառավարության և մարզպետարանի աջակցությամբ բնակչությանը մատչելի գներով հատկացվել է պարարտանյութ:

Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուծական ծառայության գործում՝ ժամանակին կատարվում է բոլոր տեսակի հակահամաճարակային միջոցառումները կենդանիների հիվանդությունների կանխարգելման ուղղությամբ:

Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի, հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործողության վրա: Ներկայումս համայնքում գործում է 4 առևտրի կենտրոն և 1 զագալցակայան:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման , ինչպես նաև ապօրինի ընդերքօգտագործման վրա: Միստեմատիկ տեղեկատվություն է ներկայացվում անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանումը՝ սեփականության իրավունքի գրանցման վկայականներում ճշգրտումներ կատարելու վերաբերյալ:

Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով գոյացած ապառքների հավաքագրման գործում: Բնակիչներին տեղեկացվում և ծանուցվում է <<հողի հարկի արտոնություններ տրամադրելու մասին>> ՀՀ օրենքի պահանջները:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել է ճշտված իրավիճակային հատակագծեր:

Միստեմատիկաբար կատարվում է աղբահանություն:

Կատարվել է միջհամայնքային ճանապարհի և ներհամայնքային փողոցների մոտ 95%լուսավորություն:

Քանի որ, միջհամայնքային ճանապարհը գտնվում է շատ վատ վիճակում սիստեմատաբար կատարվում է հողալցումներ և ավազապատում: Հողալցումներ կատարվում է նաև դաշտամիջյան ճանապարհներին:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՄՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է միջնակարգ դպրոց:

Աշակերտների թվը՝ 201

Աշխատողների թիվը 42-ը ուսուցիչներ՝ 29

Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա:

Կազմակերպվել է մի շարք միջոցառումներ:

2018թվականի ապրիլի 7-ին տեղի ունեցավ միջոցառում նվիրված մայրերին Նոր Արմավիրի համայնքապետարանում :

Վերջին զանգի առիթով բոլոր շրջանավարտներին նվիրվել է ոսկյա կախազարդեր:

Հունիսի 1-ին՝ երեխաների օրվա առթիվ, համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ միջոցառում և հյուրասիրություն համայնքապետարանի կողմից:

2018թվականից բացվեց <<Նոր Արմավիր մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ը: Թվով 40 երեխա հաճախել են մանկապարտեզ:

Համայնքի մոտ 32փողոցից լուսավորվել է 29 փողոցը:

Ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը:

Բոլոր Մահացած և ծնված ընտանիքների անդամներին տրամադրվում է 50.000/հիսուն հազար/ՀՀ դրամ միանվագ օգնություն:

Զորակոչվածներին և գորացրվածներին տրամադրվում է 20.000/քսան հազար/ ՀՀ դրամ:

Ուշադրության կենտրոնում է նաև անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը, նաև կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների ապահովումը:

Ուշադրության կենտրոնում է գտնվում սոցիալապես անապահով ընտանիքները:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը գորակոչի նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան:

Դեկտեմբերի 29-ին համայնքապետարանում տեղի ունեցավ ամանորյա միջոցառում և մեծ հրավառություն: Շուրջ 300 երեխաների նվիրեցինք ամանորյա տոպրակներ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ԵԿԱՍՈՒՏՆԵՐ	2018թ. բյուջ. Հաստատված տարեկան պլան հազար դրամ	2018թ. տարեկան պլան հազար դրամ	2018թ. տարեկան փաստացին պլան հազար դրամ
Վարչական բյուջեն ընդամենը	42465.9	42465.9	36568.0
Հողի հարկ	5000.0	5000.0	2430.8
Գույքահարկ	5000.0	5000.0	3542.7
Տեղական տուրք	486.0	486.0	75.0
Հողի Վարձավճար	420.0	420.0	319.2
Գույքահարկ շ ի ն ու թ յ ու ն	700.0	700.0	360.6
դոտացիա	29239.9	29239.9	29239.9
Այլ աղբյուրներից տրանսֆերտ	1620.0	1620.0	599.7
Ֆոնդ բյուջ ընդամենը	2500.0	2500.0	2088.5
Վարչակ. Բյուջ. Կատ. հատկացում	2500.0	2500.0	2088.5
Տարեսկզբի ազատ մնացորդ	-4809.2	-4809.2	-6164.0

2018թ. ԲՅՈՒՋԵՅԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ԾԱԽՍԵՐԻ ԳԾՈՎ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	Տարեկան պլան հաստատված հազար դրամ	2-ին կիսամյակ պլան հազար դրամ	2-ին կիսամյակի փաստացին Հազար դրամ
Վարչ. Բյուջ ընդամենը	47275.1	47275.1	40643.5
Սոց օգնություն	4140.0	4140.0	3890.0
կրթություն	2300.0	2300.0	2225.0
Հանգիստ մշակույթ	1979.9	1979.9	1396.0
աղբաթափություն	900.0	900.0	897.0
Ջրամատակարարում	9159.2	9159.2	10704.1
Ընդ. բնույթի ծառ.	28796.0	28796.0	21531.4
Պահուստային ֆոնդ	2500.0	2500.0	2088.5
Ճոնդային բյուջե ընդ.	7309.2	7309.2	6164.0

ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅՍՕՐՎԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ:
2. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ՀԻՄՆԱՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ:
3. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՅԻ ԱՍՖԱԼՏԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ:
4. ԲՈՒԺԱՍԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ՇԵՆՔԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ և ՀԻՄՆԱՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ:

Համայնքի ղեկավար՝

Ա. Ավետիսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

30.01.2019թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ1

2019թվականի հունվարի 30-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքի ընդհանուր ժողով, մասնակցությամբ՝ համայնքապետարանի աշխատակազմի, համայնքի բնակիչների և ավագանու անդամների:

Նախագահությամբ՝ Ա. Ավետիսյանի
Քարտուղարությամբ՝ Ն. Թաքիրյանի

Օրակարգում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքապետարանի 2018 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն.

Զեկուցեց Ա. Ավետիսյանը:

Նա ներկայացրեց Նոր Արմավիր համայնքի համայնքապետարանի կողմից 2018թվականի ընթացքում տարբեր ոլորտներում կատարված աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքի գյուղապետարանի 2018 թվականի հաշվետվությունը համապատասխանում է կատարած աշխատանքն և գնահատվում է դրական:
2. Հաստատել Արմավիրի մարզի Նոր Արմավիր համայնքի համայնքապետարանի 2018 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը:

Համայնքի ղեկավար՝

Ա. Ավետիսյան